# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 մարտի 2025 թվականի N 109 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-081-0016-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.09890 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Անդրանիկ Պողոսյանը, Շուշանիկ Սողոյանը, Սահանուշ Պողոսյանը, Ալլա Պողոսյանը և Մարինե Պողոսյանը դիմել են (դիմումը մուտքագրված Աշոցքի համայնքապետարանում 2025 թվականի մարտի 25-ին, մտից թիվ 470) Աշոցք համայնքի ղեկավարին իրենց պատկանող՝ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար գյուղում գտնվող 08-081-0016-0012 կադաստրային ծածկագրով 0.0989 հա մակերեսով հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան, բնակելի նշանակության շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի ***հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 22-ի թիվ 03 որոշմամբ*** Անդրանիկ Պողոսյանի /ծնված՝ 09-ը օգոստոսի 1965 թվական/, Շուշանիկ Սողոյանի /ծնված՝ 29-ը հոկտեմբերի 1965 թվական/, Սահանուշ Պողոսյանի /ծնված՝ 09-ը հոկտեմբերի 1986 թվական/, Ալլա Պողոսյանի /ծնված՝ 14-ը սեպտեմբերի 1987 թվական/ և Մարինե Պողոսյանի /ծնված՝ 31-ը հունվարի 1990 թվական/ անվամբ սեփականաշնորհված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար գյուղի 4-րդ փողոց, բնակելի տուն 6/1 հասցում գտնվող, 08-081-0016-0012 կադաստրային ծածկագրով 0.0989 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության 94,94 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով կիսանկուղը, 101,40 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը, 32,24 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը, 14,49 քառակուսի մետր ներքին մակերեսով հացատունը, 1,15 քառակուսի մետր ներքին մակերեսով շվաքարանը և 0,95 քառակուսի մետր մակերեսով պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1972 թվականին:

28,0 քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ ավտոտնակը և 31,05 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը կառուցվել են 2022 թվականին:

***Հաշվառման տվյալները մուտքագրված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024V52EBZ ծածկագրով:***

Ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-ին և 3-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և 42 հոդվածի

1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով ու 50-րդ կետով  և հաշվի առնելով, որ դրանք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը՝ որոշում եմ.

1. Ճանաչել քաղաքացիներ Անդրանիկ Պողոսյանի /ծնված՝ 09-ը օգոստոսի 1965 թվական/, Շուշանիկ Սողոյանի /ծնված՝ 29-ը հոկտեմբերի 1965 թվական/, Սահանուշ Պողոսյանի /ծնված՝ 09-ը հոկտեմբերի 1986 թվական/, Ալլա Պողոսյանի /ծնված՝ 14-ը սեպտեմբերի 1987 թվական/ և Մարինե Պողոսյանի /ծնված՝ 31-ը հունվարի 1990 թվական/ սեփականության իրավունքը Շիրակի մարզ համայնք Աշոցք, գյուղում գտնվող 08-081-0016-0012 կադաստրային ծածկագրով 0.0989 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված կիսանկուղի, բնակելի տան, ավտոտնակի, հացատան, շվաքարանի և պարսպի նկատմամբ:

2. Նույն հողամասի վրա 2022 թվականին ինքնակամ կառուցված 28,0 քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ ավտոտնակը և 31,05 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը թողնել ինքնակամ, ինքնակամ կառույցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում են հողամասի սեփականատերերը:

3. Քաղաքացիներ Անդրանիկ Պողոսյանին, Շուշանիկ Սողոյանին, Սահանուշ Պողոսյանին, Ալլա Պողոսյանին և Մարինե Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Մեծ Սեպասար, 6-րդ փողոց, բնակելի տուն 6/1 հասցեում գտնվող 08-081-0016-0012 կադաստրային ծածկագրով բնակելի նշանակության բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մեծ Սեպասար, 4-րդ փողոց, բնակելի տուն 6/1:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի մարտի 25
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2025 թվականի N 110 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՇՈՑՔ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,05672 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ 08-015-0040-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող 08-015-0040-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,05672 հեկտար մակերեսով հողամասը հատկացնել համայնք Աշոցք, բնակավայր Աշոցք, կենտրոնական հրապարակ, թիվ 4 հասցեավորմամբ վարչական շենքի պահպանման ու սպասարկման համար:
2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի համաձայն:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 մարտի 2025 թվականի N 111-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 12-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 99-Ն որոշման հավելված 1-ի 1-ին, 2-րդ ենթակետերի «դ» պարբերության, ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սերգեյ Սարգսյանին (ՀՎՀՀ՝ 57339825, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1062923/2019-03-11, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք 5-րդ փողոց, 4, 7, մակերեսը՝ 100 քառակուսի մետր) 2025 թվականի 1-ին, 2-րդ եռամսյակների համար տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի և արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2025 թվականի N 112 - Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 99-Ն որոշման հավելված 1-ի 5-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Ղուկասյանին (ՀՎՀՀ՝ 57452946, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1298599-2023-02-23, գործունեության տեսակի իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ գյուղ Աշոցք, Գյումրու խճուղի, 2-րդ թաղամաս 28) 2025 թվականի համար տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 113- Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՑՈՂԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-112-0110-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով և 50-րդ կետով, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ բնակավայրում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, 08-112-0110-0016 կադաստրային ծածկագրով անասնաշենքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Ցողամարգ, 2-րդ փողոց, անասնաշենք 33/1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2025 թվականի մարտի 27
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2025 թվականի N 114 - Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿՈՒՇ ԵՂՈՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 99-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1 -ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հայկուշ Եղոյանին (ՀՎՀՀ՝ 57333888, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1043513/2018-10-30, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք 4 փողոց 10/1, մակերեսը՝ 25 քառակուսի մետր) 2025 թվականի երկրորդ եռամսյակի համար տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 27
գյուղ Աշոցք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.hamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2025 թվականի N 115 - Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀՐԱՅՐ ՎԱՐՈՍՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 99-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1 -ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հրայր Վարոսյանին (ՀՎՀՀ՝ 57409374, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1176016/2021-05-03, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք Գյումրու խճուղի, 2-րդ թաղամաս, 2-րդ անցուղի, տուն 4, մակերեսը՝ 24 քառակուսի մետր) 2025 թվականի համար տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 28
գյուղ Աշոցք